

ԵՎԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

*Բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ*

MnacakanyanEva@mail.ru

ORCID iD: 0000-0002-0508-4050

DOI: 10.54503/978-5-8080-1587-6-240

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Բանալի բառեր – Ավետիք Իսահակյան, Պողոս Մակինցյան, Ֆրիդրիխ Նիցշե, հոռետեսություն, կենսափիլիսոփայություն:

Ամփոփում

Ավ. Իսահակյանի բանաստեղծական աշխարհի խոր ու տարողունակ շերտերը, փիլիսոփայական նրբերանգները մշտապես եղել են թե՛ ժամանակի քննադատության, թե՛ հետագա իսահակյանագիտության ու շաղկերչի կենտրոնում: Այդ տեսակետից բավական ուշագրավ է Պողոս Մակինցյանի՝ 1912 թ. «Գարուն» ամսանախում տպագրված «Դիմագծեր» մեծածավալ հոդվածը: Գրախոսն Իսահակյանի երկերում տեսնում է ժողովրդական ստեղծագործության կենսառաք աղբյուրից քաղած պատկերների, հյութեղ բարբառի ազնվացած արտացոլանքը, Շիրակի բնությունը, նրա գույներն ու շունչը: Բնությունը նրա երգերի կենսական աղբյուրն է, որ կա՛մ զուգադրվում, կա՛մ հակադրվում է բանաստեղծի ներաշխարհային տարաբևեռ տրամադրություններին, այլազան ապրումներին:

Հոդվածի նպատակն է ամփոփ վերլուծությամբ ներկայացնել Պողոս Մակինցյանի՝ իսահակյանական արվեստի ընկալման չափանիշներն ու հանգուցային դրույթները՝ տեղ-տեղ փորձելով մեր օրերի գեղարվեստական ընկալումների դիտակետից իմաստավորել բարձրացված որոշ հարցեր:

Նպատակին հասնելու համար առաջադրել ենք հետևյալ խնդիրները՝ ա. ընդհանուր հայացք նետել ժամանակի քննադատության գեղագիտական ըմբռնումներին և Իսահակյանի պոեզիայի արժևորումներին, բ. ուսումնասիրել և մեկնաբանել Պողոս Մակինցյանի քննադատական հայացքներն ու սկզբունքները, գ. ընդգծել Իսահակյանի ստեղծագործական

աշխարհի մեկնաբանման հանգուցային դրույթները:

Ուսումնասիրության նորույթն այն է, որ Պ. Մակինցյանի՝ Ա. Իսահակյանին (նաև Հ. Թումանյանին) նվիրված «Դիմագծեր» հոդվածը ամբողջովին քննվում և արժևորվում է առաջին անգամ: Նյութի քննությունն իրականացվել է նկարագրական և վերլուծական մեթոդներով:

Ամփոփելով արդյունքները՝ եզրակացնում ենք, որ այսօր էլ Պ. Մակինցյանի գնահատումների ու դիտարկումների մեծ մասը օգնում է ընկալելու Իսահակյանի պոեզիայի գաղափարական բաց ու անկեղծ, երբեմն առեղծվածային շերտերը, գեղարվեստական արժանիքները՝ դրանով իսկ զբաղեցնելով իր տեղը հայ գրաքննադատության պատմության մեջ:

YEVA MNATSAKANYAN

*Doctor of Philology, Associate Professor
Institute of Literature after M. Abeghyan of the NAS RA
MnacakanyanEva@mail.ru
ORCID iD: 0000-0002-0508-4050*

AVETIK ISAHAKYAN IN POGHOS MAKINTSYAN'S ASSESSMENT

Keywords: Avetik Isahakyan, Poghos Makintseyan, Friedrich Nietzsche, pessimism, philosophy of life.

Abstract

The deep and capacious layers of the poetic world of Avetik Isahakyan and his philosophical nuances have always been in the center of the attention of both critics of his time and Isahakyan's studies of the following period. From this perspective, Poghos Makintseyan's extensive article "Dimagtser" ("Faces"), published in the almanac "Garun" ("Spring") in 1912 (Moscow), is quite remarkable. The reviewer sees in Isahakyan's works an ennobled reflection of the images drawn from the life-giving source of folk art, the colorful dialect and the nature of Shirak, its colors and breath. The nature is the life-giving source of his songs; it is either juxtaposed with or contrasted with the poet's contradictory moods and diverse experiences.

The purpose of the present article is: a) through a brief analysis to

present the criteria and main provisions in Poghos Makint'syan's interpretation of Isahakyan's creative work, sometimes attempting to understand a number of raised questions from the point of view of contemporary artistic consciousness.

The indicated purpose conditioned the formulation of the following research objectives:

a) to present a general overview of the aesthetic views of critics of that time and the assessments of Isahakyan's poetry;

b) to research and present the interpretation of the principles of evaluation and aesthetic views of Poghos Makint'syan;

c) to highlight the main provisions in the interpretation of Isahakyan's creative world.

The novelty of this study lies in the fact that P. Makint'syan's article "Dimagtser" ("Faces"), dedicated to A. Isahakyan (as well as to H. Tumanyan), is examined in its entirety and assessed anew for the first time. The material was examined using historical-comparative, descriptive, and analytical methods.

Summarizing the results, we conclude that even today P. Makint'syan's assessments and observations help us understand the ideologically open and sincere, often mysterious layers of Isahakyan's poetry and its artistic merits, and occupy an important place in the history of the Armenian literary criticism.

ЕВА МНАЦАКАНЯН

*Доктор филологических наук, доцент
Институт литературы им. М. Абегяна НАН РА*

MnacakanyanEva@mail.ru

ORCID iD: 0000-0002-0508-4050

АВЕТИК ИСААКЯН В ОЦЕНКЕ ПОГОСА МАКИНЦЯНА

Ключевые слова: Аветик Исаакян, Погос Макинцян, Фридрих Ницше, пессимизм, жизненная философия.

Аннотация

Глубокие и емкие пласты поэтического мира Аветика Исаакяна, его философские нюансы всегда находились в центре внимания как критиков того времени, так и исаакяноведения более позднего периода. С этой точки зрения весьма примечательна обширная статья Погоса Макинцьяна «Димагцер» («Лица»), опубликованная в альманахе «Гарун» («Весна») в 1912 году (Москва). Рецензент видит в произведениях Исаакяна облагороженное отражение образов, почерпнутых из живительного источника народного творчества, отражение колоритного говора, а также природу Ширака, её краски и дыхание. Природа – живительный источник его песен, она или сопоставляется с противоречивыми настроениями и разнообразными переживаниям поэта, или противопоставляется им.

Цель настоящей статьи: а) путем краткого анализа представить критерии и основные положения в трактовке Погосом Макинцьяном творчества Исаакяна, местами пытаюсь осмыслить с точки зрения современного художественного сознания ряд выдвинутых вопросов.

Указанная цель обусловила постановку следующих задач исследования: а) представить общий обзор эстетических воззрений критиков того времени и оценок поэзии Исаакяна; б) исследовать и представить интерпретацию принципов оценки и эстетических воззрений Погоса Макинцьяна; в) выделить основные положения в интерпретации творческого мира Исаакяна.

Новизна исследования заключается в том, что статья П. Макинцьяна «Димагцер» («Лица»), посвящённая А. Исаакяну (а также О. Туманяну), впервые рассматривается и оценивается по-новому. Исследование материала осуществлялось с использованием описательного и аналитического методов.

Подводя итоги, приходим к выводу, что и сегодня оценки и наблюдения П. Макинцьяна помогают постичь идейно открытые и искренние, зачастую загадочные пласты поэзии Исаакяна, ее художественные достоинства и занимают важное место в истории армянской литературной критики.

Ներածություն

XX դարի սկիզբը գրականության պատմության բարդ ու հետաքրքիր շրջան է՝ գրական քննադատության, մեթոդաբանական սկզբունքների, գեղագիտական տարբեր ուղղությունների ու հոսանքների ձևավորման ներքին հակասությունների ու դրոնումների տեսանկյունից: Հատկապես գրական քննադատությունը՝ իբրև գրական-գեղարվեստական շարժումը մեկնաբանող միջոց, սկսում է պատմական ու տեսական հասկացություններ յուրացնել՝ գրական ստեղծագործությունը քննելով գրապատմական, գեղագիտական ու գաղափարական բազմապիսի հարցադրումներով՝ դրանով իսկ ուղղորդելով հասարակական ու մշակութային մտքի շարժման ընթացքը:

Քննադատական մտքի պատմության մեջ միշտ չէ, որ առանձին գրողներին վերաբերող քննադատական արձագանքները ժամանակի համար ընդհանրական-սկզբունքային նշանակություն են ձեռք բերել և իրենցով բնորոշել մշակութային կյանքի այդ բնագավառը, սակայն եղել են անհատներ, որոնք իրենց ստեղծագործական աշխարհով եղել են մի ողջ պատմաշրջանի կերտողն ու կրողը: Ի դեմս Իսահակյանի (ինչպես և Թումանյանի) ստեղծագործության քննադատական արձագանքների՝ գործ ունենք հենց այդօրինակ երևույթի հետ. դրանք ցույց են տալիս, որ բանաստեղծի հայտնությամբ հայ գեղարվեստական մշակույթի պատմության մեջ պարագծվել է անկրկնելի մի պատմաշրջան՝ միաժամանակ նորացնելով հենց իր՝ քննադատության դիմագիծը: Իզուր չէ, որ ավարտուն այդ պատմաշրջանը այսօր էլ շարունակում է հետաքրքրության առարկա մնալ հետազոտողների համար:

Մեկ դարից ավելի է՝ Ավ. Իսահակյանը գտնվում է հայ գրականության պատմության անկանգ ընթացքի մեջ: Նրա բանաստեղծական աշխարհի խոր ու տարողունակ շերտերը, փիլիսոփայական նրբերանգները մշտապես եղել են թե՛ ժամանակի քննադատության, թե՛ հետագա իսահակյանագիտության ուշադրության կենտրոնում: Սակայն պետք է նկատենք, որ Իսահակյանի ստեղծագործական աշխարհի, գրական-գեղագիտական հայացքների ամբողջական և համակողմանի ընկալման, բացահայտման տեսանկյունից դեռևս հետազոտության առանձին նյութ չեն դարձել բանաստեղծի ողջության օրոք հնչած քննադատության արձագանքները, որոնք որոշակիորեն

ձևակերպել են Իսահակյանի գրականության տեսությունը, ստեղծագործությունների փիլիսոփայական, գեղագիտական հղումները: Ժամանակին ճիշտ է նկատել Էդ. Ջրբաշյանը. «Թեև մեր խոշորագույն գրողների, մանավանդ Աբովյանի և Նալբանդյանի, Թումանյանի և Իսահակյանի մասին բավական հարուստ քննադատական և գիտական գրականություն է ստեղծվել, բայց այն մինչև հիմա չի դարձել հատուկ քննության նյութ...» (Ջրբաշյան, 1982: 88):

Այդ տեսակետից բավական ուշագրավ է գրաքննադատ, թարգմանիչ Պողոս Մակինցյանի՝ 1912 թ. «Գարուն»¹ ավանախում տպագրված «Դիմագծեր» սովորաձավալ հոդվածը, որը ժամանակի առաջին քիչ թե շատ ամբողջական ուսումնասիրությունն է՝ նվիրված երկու մեծագույն բանաստեղծներ Հ. Թումանյանին և Ավ. Իսահակյանին²:

Իսահակյանի սիրային քնարի նրբերանգները

Որոշակիորեն հակադրվելով 20-րդ դարասկզբին դեռևս մեծ ազդեցություն ունեցող կուլտուր-պատմական դպրոցին՝ Պ. Մակինց-

¹ 1910-ական թվականների գրաքննադատության գաղափարական ու մեթոդական որոնումների շրջանում ուշագրավ երևույթ է «Գարուն» գրական-քննադատական ամսանախի III գիրքը (1912, Մոսկվա): Այն ընդգրկում է վեց ուսումնասիրություն՝ «Հանճարեղ սիրտը» (Կ. Կուսիկյան), «Սմբատ Շահագիզ» (Ալ. Ռուբենի), «Անցյալի մեծարանքը» (Դ. Անանուն), «Ավետիս Ահարոնյան» (Յ. Խանգադյան), «Հ. Հովհաննիսյանի և Ալ. Շատուրյանի բանաստեղծությունների հասարակական արժեքը» (Ալ. Մարտունի), «Դիմագծեր» (Պ. Մակինցյան): Հոդվածները մեծ արձագանք են գտնում. ծավալվում են բանավեճեր, տպագրվում են թեր և դեմ կարծիքներ թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ հատվածներում:

² Իսահակյանագիտության մեջ ամրագրված է տեսակետը, որ Պ. Մակինցյանը եղել է Ավ. Իսահակյանի պոեզիայի երկրպագուն և դեռևս 1907 թ. կազմել և հրատարակել է նրա բանաստեղծությունների առաջին ժուսերեն ժողովածուն՝ «Արագի ծաղիկներ» խորագրով: Հրապարակային առաջին անդրադարձը եղել է 1910 թ. մարտի 21-ին, երբ Մոսկվայի հայկական ակումբում հանդես է գալիս Ավ. Իսահակյանին և Հ. Թումանյանին նվիրված բանախոսությամբ: Իսահակյանին երիտասարդ քննադատն անվանում է «սուրբեկտիվիստ երգիչ», որի ստեղծագործություններում գերիշխում են սերը, թախիծը, միայնությունը, հիասթափությունը, վիշտը: Մակինցյանը զարգացնում է միտքը, թե բանաստեղծի քնարերգության մեջ մեծ տեղ են գրավում հայ գյուղաշխարհի բարքերը, կենցաղը, երբեմն էլ հայրենասիրական մոտիվները, որոնք «հիշում են նրան» դեպի վտանգավոր ուղի: Բանախոսի ներկայացրած դրույթները տեղիք են տալիս բուն բանավեճի (տե՛ս «Հորիզոն», հմ. 73, 1910, «Մշակ», հմ. 84, 1910):

յանը՝ իբրև մարքսիստական ուսմունքի և գեղագիտության երիտասարդ ներկայացուցիչ, փորձում է իր վերլուծությունը կառուցել պատմական և գեղագիտական հայացքների օրգանական համադրությամբ: Իսահակյանի մասին խոսքը սկսում է Շիրակի նկարագրությամբ՝ նրա երգերում տեսնելով ժողովրդական ստեղծագործության կենսառաք աղբյուրից բխած պատկերների, հյուսեղ բարբառի ազնվացած արտացոլանքը, Շիրակի գեղատեսիլ բնությունը, նրա գույներն ու շունչը, մեղեդին ու լուծությունը, սակայն մի էական ընդգծումով. որևէ բնապատկեր՝ իբրև ինքնին ամբողջություն, «für sich գոյություն չունի նրա համար» (Մակինցյան, 1912: 317)³:

Բնությունը նրա երգերի կենսական աղբյուրն է, որ կա՛մ զուգադրվում, կա՛մ հակադրվում է բանաստեղծի ներաշխարհի տարաբևեռ տրամադրություններին, հարափոփոխ զգացումներին ու ապրումներին: «Քնարերգակը արտացոլում է ոչ թե կյանքը, այլ իր անմիջական վերաբերմունքը դեպի այն,– գրում է Մակինցյանը:– Եվ Ավ. Իսահակյանը միշտ ինքն իրան է երգում, նույնիսկ այն դեպքում, երբ նրա երգի նյութը հանրային զգացմունք, հասարակական երևույթ կամ համամարդկային գաղափար է: Ավ. Իսահակյանի բանաստեղծությունը – նրա հոգու երգն է, սեփական ապրումներից հյուսած մի սիմֆոնիա, որի յուրաքանչյուր դաշնակը մի շիտակ ու հստակ հոգու կյանքի վեպն է նվագում...» (318): Այս միտքը, որում միաձուլված են սոցիոլոգիական-պատմական և գեղագիտական հայեցակետերը, հետագայում տարբեր երանգավորումներով դառնում է իսահակյանական աշխարհի բնութագրման կարևոր ցուցիչներից: Զգացմունքների ծայրաստիճան անկեղծության, բնականության, անմիջականության վրա է խարսխվում Իսահակյանի ողջ պոեզիան: «Իսահակյանի երգերը,– գրում է Էդ. Զրբաշյանը,– երբ մանավանդ կարդում ես ժամանակագրական կարգով, իրոք դառնում են յուրատեսակ քնարական օրագիր, որի մեջ հեղինակն ասեք ուղղակի գրի է առել իր խոհերի և ապրումների, կյանքում ստացած անհամար վերքերի պատմությունը» (Զրբաշյան, 1982: 120):

³ Այսուհետ «Դիմագծեր» հոդվածից կատարված մեջբերումների կողքին փակագծում կնշվի միայն համապատասխան էջը:

Մակինցյանն իսահակյանական աշխարհի ծննդյան⁴ թիվը համարում է 1898-ը, երբ լույս է տեսնում «Երգեր ու վերքեր»⁵ ժողովածուն: Երիտասարդ բանաստեղծը ներկայանում է խորունկ ու սիրառատ հուզաշխարհով, որտեղ մարդկային կյանքի ու բնության գրեթե բոլոր երևույթներն անմիջական արձագանք են գտնում: Տակավին երիտասարդ սրտի համար կենսատուն ու զորեղը սիրո քնքուշ լարն է, որ հետո ճյուղավորվում ու նորանոր գույներով է պարուրում սիրահարին: Հոգեկան խորունկ ապրումները՝ իբրև զգացմունքների հարափոփոխ շղթայի նուրբ օղակներ, աստիճանաբար սեղմվում են, ապա սիրո որոնումների ու սպասումների նորանոր երանգներով բացվում և ընթերցողին է ներկայանում սիրազարկ ու դառնացած, այլևս տեսիլների աննյութ աշխարհին փարված, ցնորուն հոգու, սիրո ծարավ բանաստեղծը:

-Սիրոս, սիրոս թույլ կ'բաղխե,

Սեր ու երգեր էլ չ'կան,

Նոր էր ծեր, արև սիրեց,

Արև աչեր էլ չ'կան (320):

«Անարատ սիրո հոգեբանությունը իր որոնումներով, սպասումներով, հույս ու հույզերով, տենչ ու կարոտով և, իբրև հետևանք այդ

⁴ «Երգեր ու վերքեր» ժողովածուի առաջին գրախոս Ն. Աղբալյանը գրում է. «Ովքեր հետևում են մեր պարբերական հրատարակություններին, նրանց ծանոթ է անշուշտ պ. Իսահակյանի անունը, որ 4-5 տարի է արդեն, ինչ տպում է իր բանաստեղծությունները «Տարագում», «Արաքսում» և «Աղբյուրում»: Բայց այս 4-5 տարին, սխալված չենք լինի որ ասենք, թե նրա մասին մի էջ բան չի տպված: Այդ չի նշանակում սակայն թե նրա գրվածները անուշադիր էին անցնում և հետաքրքրության ու խոսք ու գրույցի նյութ չէին դառնում: Ընկերների ու գրականությունը սիրողների փոքրիկ ու նեղ շրջաններում նրա մասին խոսում էին, նրան հետևում էին. կարդում, անգիր էին անում նրա ոտանավորները, վեճ ու գրույցի նյութ էին դառնում նրա շնորհքն ու գրվածները, որոշ կարծիք էին կազմում նրա մասին: Բայց այդ խոսք ու գրույցը և կարծիքները ուժեղ չէին թե ինչ՝ այսքանը պարզ է, որ արձագանք չէին գտնում հրապարակի վրա: Պ. Իսահակյանը «գոյություն ունեցավ» միայն այն ժամանակ, երբ տեսան թե գրական հրապարակն իջնելիս նա իր գիրքն ունի ձեռքին» (Աղբալյան, 1898: 840):

⁵ Ա. Ինճիկյանը, անդրադառնալով ժողովածուի վերնագրին, գրում է. «Ընտրելով “Երգեր ու վերքեր” խորագիրը՝ Իսահակյանը ցանկացել է ընդգծել իր երգերի էլեգիական բնույթը, որ դրանք ոչ թե վայելքի ու խնդության, այլ դառն իրականության հասցրած վերքերի ու վշտերի արտահայտություններ են» (Ինճիկյան, 1977: 109):

զգացմունքի ժամանակավոր անբավարարվածությանը՝ մի մեղմ ու անուշ թախիժ – ահա Ավ. Իսահակյանի «Երգեր ու վերքեր»-ը»,– գրում է Մակինցյանը (320-321): Քննադատը մատնանշում է քնարական զորեղ տարերքը, որ պարուրում է բանաստեղծի միտքն ու հոգին: Այստեղ աշխարհն իր երազանքի, իդեալի օգնությամբ վերափոխել ձգտող ռոմանտիկ անհատն է:

Տարեցտարի քնքուշ թախիժը վերափոխվում է հուսալքումի, ու դառնացած հոգու վշտածոր արձագանքն է տարածվում ամենուր: «Սիրեցի – յարս տարան,– հեծեծում է Իսահակյանն ու խոստովանում.– Սերս է մեռեր սրտիս մեջ» (321, 322): Սիրո մահն իր տարբեր ձևերով, հոգու լուռ ճիչն ու կսկիծը դառնում են տիրապետող նրա երգերի մեջ: Սիրո դարդից դադված ու ընդարմացած բանաստեղծը այլևս չի հավատում կնոջ երդումին. հօդս են ցնդում ռոմանտիկ երիտասարդի՝ իդեալական շղարշով պատված երազները: Սակայն երկար չի տևում «բեղվին» բանաստեղծի տառապանքը, հոգեսլաց ու տենչագին որոնումները: Մակինցյանն Իսահակյանի պոեզիայում նկատում է աստիճանական անցում դեպի իրականություն, որտեղ «Աննյութ, անմարմին, անկիրք սեր չկա. Ա՛խ, մաքուր սերը երազ է միայն»: Ավելին, քննադատը հոռետեսական տրամադրությունների տակ որսում է բոլորովին այլ՝ «ստորին» մի բան. «Բանաստեղծի սերը այլասերվել, կրքի կերպարանք է ընդունել, և նա չի հապաղում կրքերի սանձարձակություն քարոզելու, որից չմտածած, գավառական էպիկուրիզմի հով է փչում» (327):

Ասածը հաստատելու համար Մակինցյանը բերում է Իսահակյանի տողերը. «Արա ինչ կուգես, ինչ որ կարող ես, Պարտքն ու բարին սուտ են ու պատիր»: Հետևում է եզրակացությունը. «Ասել է թե՛ “երբ ինչդ գալիս ա- րաբ”» (327): Քննադատը չի զարգացնում իր այս շինծու կարծիքը. համոզված է՝ կյանքի դաժան հորձանուտից ներմուծված «ամորալ տրամադրությունը» անբնական է ու կեղծ, և անմիջապես ձևակերպում է Իսահակյանի քնարի էատարրը կազմող «նյարդը». «Սերը Ավ. Իսահակյանի հոգու ամենաէական մոմենտը, ուստի և նրա ստեղծագործության ամենաբնորոշ ներվն է և այն՝ ամենալայն իմաստով» (328):

Սիրո բնական ու անփոփոխ, հավերժապես ջերմ ու անշահախնդիր, լուսավոր ու անխաբ դրսևորումը անուն ունի, և այդ կենարար սիրո խորհրդանիշը մայրն է, որը մարդկային կեցության բարոյական աղտեղություններին հակադրվում է իբրև մաքրության ու սրբության սկիզբ: Իսահակյանի քնարական աշխարհի անանց խորհրդանիշն է մայրը՝ ամոքանք զավակի սիրո վերքերին, կարոտած սրտին: «Պանդուխտ որդին» բանաստեղծության տողերը զուգադրելով Նեկրասովի⁶ «Внимая ужасам войны...» ստեղծագործության *ընկեր-յար-մայր* համանման շղթային՝ Մակինցյանն ընդգծում է Իսահակյանի պատկերակերտման վարպետությունը. տեսանելիորեն ուրվագծում է թե՛ ընկերոջ, թե՛ սիրած էակի, թե՛ մոր հոգեբանության նուրբ հայելին: Երկու անգամ մերժված «աղքատ ու փոշոտ» ճամփորդին անմիջապես ճանաչում և իր գիրկն է առնում մայրը, որն իր գերզգայուն էությանը ու «անպատիր սիրով» չի կարող չճանաչել որդուն: Քննադատը կարևոր շեշտադրում է անում. այս սերը զուտ նեղ անձնական բնույթ չի կրում, այլ, «դուրս գալով եսական-նեղ շրջանակից, տարածվում է դեպի բոլոր մայրերը, բոլոր բալեքը, և այստեղ է թաքնված այդ զգացմունքի բոլոր վեհությունն ու խորությունը» (330):

Համակրանքի կնիքով Մակինցյանն Իսահակյանի քնարերգության մեջ ընդգծում է խորհրդանիշների անտրոհելի շղթան՝ մայր – մայրեր – մարդկային հասարակություն – հայրենիք, և ժամանակի սոցիալ-քաղաքական, պատմական հարաբերությունների համատեքստում քննում բանաստեղծի քնարերգության երկրորդ լարը՝ հանրային զգացմունքներ ու գաղափար արտահայտող ազատության երգերը: Դրանք «Հայդուկի երգերից»⁷ անունը կրող բանաստեղծություններն

⁶ «Հիշո՞ւմ եք Նեկրասովին, - գրում է Պ. Մակինցյանը. - «увы, утешится жена, и друга личный друг забудет, но где-то есть душа одна – она до гроба помнить будет». Կանվան նույնն է՝ ընկեր, յար, մայր: Մակայն Նեկրասովի գրվածում մենք ոչ ընկեր ենք տեսնում, ոչ յար, ոչ էլ մայր. ընդհանուր առմամբ պրոգայիկ և լիտորիկ Նեկրասովը ինքն իրան հավատարիմ է մնացել նաև այս իր լավագույն գործերից մեկում» (329):

⁷ Գրականագետ Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքի առաջաբանում գրում է. «Հայդուկի երգերից» շարքը սկսեց կազմավորվել դարավերջին 1896 թվականից համընկնելով հայ ազգային ազատամարտի նոր փուլին, երբ Չեյքունի և Սասունի ապրումալի կոտորածներից հետո ժողովրդի լավագույն զավակները համա-

են, որոնք արտացոլում են Իսահակյանի ոչ միայն գեղագիտական, այլև ազգային մտածողության հավատամքը:

Հայրենասիրական երգերի պաթոսը

Իսահակյանի բանաստեղծական աշխարհն աստիճանաբար հարստանում է այլասիրական (ալտրոփստական), հանրային տրամադրություններով ու գաղափարներով, և հայրենիքի ազատությանն ու ազատագրությանը, նրա «բալեքին» նվիրված երգերը գերակայում են նրա երկրորդ գրքում: Բանաստեղծը հանդես է գալիս ոչ միայն իբրև քաղաքացիական ըմբոստ ոգով ու կրքով լեցուն ազգային շարժման ու մաքառման գաղափարախոս, ֆիդայական հերոսամարտերի գեղագրող, այլև հայ ժողովրդի դարավոր իղձերի ու երազանքների արտահայտիչ ու առաջամարտիկ: «Երբե՛ք ազգային ռոմանտիզմը այսպիսի նուրբ ու սրտաշարժ ձևերով մեր բանաստեղծության մեջ չէր արտահայտել, – գրում է Մակինցյանը, – երբե՛ք հայդուկների ձեռք բերած «ազատ վաթան»–ի գաղափարը, իր ծագման օրից սկսած՝ այնքան հմայիչ, հրապուրիչ պատկերներով չի մարմնացել, ինչպես իր մահվան նախօրյակին Ավ. Իսահակյանի երգերում:

Սուրը չ’թողեց, որ աշուղ դառնամ,

Սազը չ’թողեց, որ կտրիճ դառնամ:

Այսպես է բնորոշում իր վերաբերմունքը դեպի հայդուկների գործը ինքը՝ երգիչը» (333):

Հայ բանաստեղծը խորապես ապրում է կոտորածի դժոխային պարունակներով անցնող արևմտահայության ճակատագրով: Ազգային գաղափարախոսության իրականացման ճանապարհին շատերն են զոհասեղանին դնում իրենց հոգեկան ու նյութական միջոցները,

խմբվելով հայ հեղափոխական դաշնակցության մեջ որոշեցին իրենց ձեռքով և իրենց գեներով նվաճել Հայաստանի անկախությունը: Նորաստեղծ քաղաքական ուժը թե՛ Արևմտյան, թե՛ Արևելյան Հայաստանում կազմակերպում էր կամավորական ջոկատներ՝ Հայրենիքը փրկելու համար: Արևմտյան Հայաստանում ծնունդ առան մի շարք ֆիդայական խմբեր՝ Աղբյուր Սերոբի, Անդրանիկի, Արաբոյի, Գևորգ Չաուշի, Սմբատի, Հրայրի, Քեռու և այլ հերոսների գլխավորությամբ: Դարավերջը ֆիդայական ամենացայտուն շրջանն էր. նման ազգային զարթոնք վաղուց չէր տեսել հայոց հողը, և բնականաբար շարժումը, բացի գաղափարական ու քաղաքական կազմակերպիչներից, պահանջում էր իր երգչին: Եվ այդպիսին եղավ հենց Իսահակյանը» (Իսահակյան, 1990: 5-6):

սակայն Մակինցյանը նկատում է՝ «հայրենասիրական անմեղ զեղմունքը, ռոմանտիկական ոգևորությունը, մեղմ ու սիրուն անրջանքը – այդ բոլորը նացիոնալիզմի մեղալի մի երեսն է, իսկ մյուս երեսին ռազմական սին պաթոս է դրոշմվել սրտնեղ ու տգեղ» (334): Այս հաջորդում է քննադատի մեկնաբանությունը, թե Իսահակյանը «արյունոտ ֆանատիզմով» «սրբազան կռիվ» կոչ է անում՝ քարոզելով «այնքան վայրագ մտքեր, որ ականա քարե դարաշրջանի բարբարոսությունն ես հիշում», այն է՝ «Չե՛ս սպանիլ – քեզ կ'սպանեն, Դո՛ւ սպանիր – քեզ չ'սպանեն» (334) բանաձևումով: Մարքսիստ քննադատը բանաստեղծին «մեղադրում է» նացիոնալիզմին⁸ տուրք տալու մեջ, միաժամանակ փորձում այդ «նացիոնալիզմը» պայմանավորել 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ ժողովրդի պատմական ճակատագրի ողբերգական ու մղձավանջային շրջադարձերով, արևմտահայության ազատագրման հույսերի փլուզմամբ: Ուրեմն ֆիզիկական ոչնչացման, բռնի ուժացման, գաղթի պայմաններում մնում էր կա՛մ համակերպվել, կա՛մ կեղծ դիվանագիտությամբ փորձել լուծել

⁸ Ուշագրավ է, որ գրեթե նույն ժամանակահատվածում նացիոնալիզմի մեջ մեղադրվում էր նաև Թումանյանը: Մարքսիստական քննադատության ներկայացուցիչ Ա. Կարինյանը, «Հայ նացիոնալիզմի ճգնաժամը» հոդվածում, անդրադառնալով «Հայրենիքիս հետ» ժողովածուին, քննում է պատերազմի թոփուքիում արթնացած տրամադրությունները, հայ մտավորականության «նացիոնալիստական-քաղաքական տենչերը»: «Հայ նացիոնալիստը, – գրում է Կարինյանը, – Կովկասում երբեք նկատի չի ունեցել շահագործվող տարրերի, հայ բանվորության՝ ժողովրդի շահերը և ձգտումները: Վերացական Հայաստանը եղել է ռոմանտիկական այն իդեալը, որ փայփայել է բուրժուական մտավորականը... Առանց քննելու կոնկրետ հասարակական քաղաքական պայմանները, առանց նկատի առնելու ռուսահայ և տաճկահայ ժողովրդի իրական սոցիալական ձգտումները, հիշյալ մտավորականը ձեռնարկել է որոշ քաղաքական էքսպերիմենտներ և ռոմանտիկական ապստամբություններ...» (Կարինյան, 1916):

Քննադատը հայ «նացիոնալիստին» մեղադրում է Տաճկահայաստանը՝ իբրև վաղեմի «փղեակների»՝ «աբստրակտ Հայաստանի մարմնացման մի նպատակահարմար» հնարավորություն շահարկելու մեջ: Այս հայեցողությունը նա տեսնում է գործունեության բոլոր ասպարեզներում, մասնավորապես գեղարվեստում, որի արտահայտություններից շատերը, ըստ նրա, գուրկ են գեղարվեստական արժեքից: Ա. Կարինյանը խոսքը մասնավորեցնում է Թումանյանի «Հայրենիքիս հետ» ժողովածուի շուրջ. «Այդ երգերի մեջ երևում է մեզ ոչ միայն ռազմական ինստինկտներով տոգորված կոշտ «հայդուկը», այլև տկար հույզերով, հուսահատ տրամադրությամբ համակված մտավորականը...» (Կարինյան, 1916):

ազգի գոյաբանական խնդիրը. երկու դեպքում էլ ավարտը նույնն էր լինելու՝ հոգևոր կամ ֆիզիկական կործանում: Կար երրորդ ճանապարհ կա՝ դիմադարձ պայքար: Գրականության պատմաբան Ս. Սարինյանը հայ գաղափարաբանության շերտերը քննելիս նկատում է, որ «հանգամանքներն այլ միջոց չէին թելադրում, քան դիմադրական պայքարը, որ հենց կոնկրետ հանգամանքներն էին պարտադրում զենքի ճշմարտությունը, որ չկար այլ ընտրություն, քան մահ կամ ազատություն սկզբունքը» (Սարինյան, 1998: 120): Ժամանակին մարքսիստական տեսակետը, սակայն, դասակարգային պայքարի սոցիալական ազատագրությունը գերադասում է ազգի ազատագրությանը՝ «անգիտանալով, որ ամեն կարգի գոյությունից առաջ պետք է ունենալ ֆիզիկական գոյություն» (Սարինյան, 1998: 64):

Զմանրամասնելով ազգային-հայրենասիրական, ֆիդայական շարժման երգերի գաղափարական շերտերը՝ Մակինցյանը սահուն անցնում է Իսահակյանի սրտի հերոսներին. դրանք կապիտալիստական հասարակարգից մերժված «աշխարհի խորթ տղերքն» են, «քարից, հողից հաց քամող» «քեասիբները», զրկվածներն ու զարկվածները, այլ խոսքով՝ քաղաքի անօրեն միջավայրին օտար գյուղի ու բնության զավակները, հայ գեղջկուհին ու մայրը: Բանաստեղծը մեծագույն վարպետությամբ ոչ միայն սնվում է գյուղական միջավայրի հաղորդած կենսատու աղբյուրից, այլև պատկերում է նույն գյուղացու հոգեբանության տարադրսևորումները: Իսահակյանի ստեղծագործության այս երակը ևս քննադատը թողնում է մակերեսային անդրադարձի մակարդակում՝ բանաստեղծի աշխարհայացքը բնութագրելով այսպես. «Ինչպես Ավ. Իսահակյանի նացիոնալիզմը, քեասիբի դատը, այնպես էլ նրա «ազատության» և «օրենք»-ի ըմբռնումը մանր-բուրժուական բնորոշ կնիքն է կրում» (337): Անդրադառնալով այս բնութագրին՝ Ս. Սարինյանը նշում է, որ քննադատի ըմբռնմամբ՝ այս հասկացությունները «միանգամայն դրական սկիզբ ունեն և միտված են բանաստեղծի գեղարվեստական աշխարհայեցության գիտական լուսաբանությանը: Եվ միանգամայն բնական է, որ դրանք չեն կաղապարում քննադատի տեսադաշտը իր «Դիմագծերում» բացահայտելու Թումանյանի ու Իսահակյանի ստեղծագործության գեղարվեստական

արժեքը, գրական դիմագծերը, որոնք իրենց հարցադրումներով ու մեկնություններով միանգամայն ինքնատիպ երևույթ էին ժամանակի քննադատության մեջ» (Սարինյան, 1989: 187-188):

Իսահակյան-Նիցշե փիլիսոփայական ազդեցության հարցը

Շարունակելով վերլուծությունը՝ Մակինցյանն ամրագրում է Իսահակյանին բնորոշ մի առաձնահատկություն, որը նրան զատում է մյուս բանաստեղծներից. նրա միտքը հակված է փիլիսոփայելու: «Շատ հազիվ է պատահում, երբ միևնույն մարդու մեջ միավորվում են զորեղ գեղագետն ու զորեղ մտածողը,– գրում է քննադատը.– այդ դեպքում բանաստեղծությունը փիլիսոփայական մեծ գաղափարների գուշակ է դառնում, գեղարվեստը կանխում է գիտությունը: Ավ. Իսահակյանը այդ բախտավոր միավորումներից չէ: Նրա որոնումները չեն առկայծում նոր և ինքնուրույն մտքերով և ոչ էլ մի ամբողջական աշխարհայեցողություն է բյուրեղանում բանաստեղծի պատկերներում: Ավ. Իսահակյանը ոչ միայն ինքը չի ստեղծել, նա չի կիրառել և ոչ մի փիլիսոփայական սիստեմ, կենսահայեցողություն, աշխարհի ըմբռնում իբրև ամբողջություն,– այնպես որ մեզ համար նրա մտքի փիլիսոփայելու հակումը, նրա որոնումները, որպես այդպիսին՝ ավելի արժեք ունին, քան թե նրա արտադրած գաղափարներն ու զգացումները» (341):

1912 թ. հնչած այս կարծիքն հակազդման մղում է առաջ բերում. ժամանակի հեռավորությունը թույլ է տալիս պնդելու՝ Իսահակյանն այն բանաստեղծներից է, որոնց մեջ միավորված են թե՛ գեղագետը, թե՛ մտածողը, և նա, բնականորեն ազդվելով 19-րդ դարավերջին մեծ տարածում գտած փիլիսոփայական ուսմունքներից (Շոպենհաուեր, Նիցշե), այնուամենայնիվ, հիմք է դրել նոր՝ իսահակյանական փիլիսոփայության: Քննադատը թեականորեն նկատում է՝ ասում են՝ Իսահակյանը Նիցշեական է⁹ և իբրև օրինակ մեջբերում մի հատված Մ.

⁹ Տողատակին Մակինցյանը հղումներ է անում այլ գրաքննադատների ևս՝ Ալ. Ռուբենի, «Մուրճ», 1904, մարտ, Վ. Փափագյան, «Պատմություն հայոց գրականության», 1910, Ն. Աղբալյան, «Բանբեր գրականության և արվեստի», 1904, Բ. զիլք, որոնք միանգամայն համոզված են՝ Իսահակյանը մեծապես ազդվել է Նիցշեից, ինչպես նաև Հարթմանից, Շոպենհաուերից:

Բերբերյանի գրախոսությունից. «Նիցշեի շեշտակի փիլիսոփայությունը¹⁰ հափշտակում է հուսախաբ և հուսահատ հայ բանաստեղծին: Եվ այդ նիցշեականությունը (ավելի ճիշտն ասած՝ նրա փիլիսոփայության մի կողմը), անհատականության և անիշխանականության քարոզի հետ միասին գալիս են ձևակերպելու մռայլ երգչի աշխարհահայեցողությունը: Այսպես է առաջ եկել **«Բաղերը վայրի թռան շվարած»** ոտանավորը, որի բնաբանը Նիցշեի խորիմաստ նախադասությունն է՝ **«Մի՛ գնա մարդկանց մոտ – գնա անապատ գազանների մոտ»**»¹¹: Մակինցյանը հակադարձում է. «Անհատականության և անիշխանականության սկզբունքը Նիցշեից շատ ու շատ առաջ է գտել իր արտահայտիչներին, և այդ իմաստով Նիցշեն ավելի շուտ հետևող է, քան վարդապետող» (341-342):

Իսահակյանագիտության մեջ բազմիցս է արծարծվել Իսահակյանի՝ նիցշեական փիլիսոփայության¹² հետևողն ու անմիջական ազդեցության կրողը լինել-չլինելու հարցը: Որոշ քննադատներ՝ Մ. Բերբերյան, Վ. Փափազյան, Ալ. Ռուբենի, Լ. Մանվելյան, Իվ. Գնունի, Ե. Ֆրանգյան, մատնանշում են Նիցշեի ուղղակի ազդեցությունը Իսահակյանի պոեզիայի, հատկապես «Աբու-Լալա Մահարի» պոեմի վրա: Օրինակ՝ Ե. Ֆրանգյանը իր «Ֆ. Նիցշե և նրա փիլիսոփայությունը» ուսումնասիրության մեջ, նկատելով, որ Նիցշեի ազդեցությունն առհասարակ զգալի է հայ գեղարվեստական գրականության վրա, գրում է. «Մեր սիրելի և տաղանդավոր բանաստեղծ Ավ. Իսահակյանի ստեղծագործությունների մեջ, արձակ թե չափածո, խիստ աչքի են զարնում նիցշեական տարրերը: Բայց իսկույն պիտի ավելացնեմ, որ

¹⁰ 19-րդ դարի 90-ական թթ. և 20-րդ դարի սկզբին մեծ էր Նիցշեի ազդեցությունը գեղարվեստական գրականության և հասարակական մտքի վրա: Նրա երկերի քննադատական ոգին, կյանքն ամբողջովին ժխտելու և վերագնահատելու մոլուցքը կյանքը արմատապես փոխելու հեղափոխական տրամադրություն էր ենթադրում և դրանով էլ դառնում գայթակղության փորձաքար:

¹¹ Տե՛ս նաև Մ. Բերբերյան, «Արարատ», հմ. Բ. (փետրվար), Ս. Էջմիածին, 1908, էջ 160:

¹² 19-րդ դարի 90-ական թթ. և 20-րդ դարի սկզբին մեծ էր Նիցշեի ազդեցությունը գեղարվեստական գրականության և հասարակական մտքի վրա: Նրա երկերի քննադատական ոգին, կյանքն ամբողջովին ժխտելու և վերագնահատելու մոլուցքը կյանքն արմատապես փոխելու հեղափոխական տրամադրություն էր ենթադրում և դրանով էլ դառնում գայթակղության փորձաքար:

Ավ. Իսահակյանը չի ներկայանում որպես Նիցշեի սոսկական կրկնողը: Նա խիստ ինքնուրույն տիպ է, նրա մտքերը յուրահատուկ դրոշմն են կրում» (Ֆրանգյան, 1910: 22)¹³:

Եթե որոշ քննադատներ հակված էին պաշտպանելու այս թեզը, ապա Մակինցյանը կտրականապես մերժում է¹⁴ այն: Ըստ քննադատի՝ Իսահակյանը լոկ «նիցշեական» ոճից, արտաքին ձևից է ազդվել¹⁵, այնինչ էությանմբ բոլորովին նման չէ նիցշեական գերմարդուն՝ իր մենակությամբ հպարտ, ռոմանտիզմի անհաղթ թշնամի, խրոխտ ու դաժան: Նա ռոմանտիկ է, որի խոհերի անըջական պատկերներում, երգերում թե՛ անձնական, թե՛ ազգային, թե՛ համաշխարհային վշտի երանգներ ու ապագայի շողի առկայծումներ կան: Մակինցյանը որոշակիորեն ամրագրում է՝ բանաստեղծի երգերը պատկանում են ռոմանտիկական մեթոդին: «Ավ. Իսահակյանը ռոմանտիկ է. համաշխարհային վշտի շեշտեր են կրում նրա երգերը... Դա մեր добрый старый приятель ռոմանտիկն է» (346):

Ասվածի ապացույցը Իսահակյանի վկայությունն է, որ տարիներ անց գրի է առել Ա. Ինճիկյանը: «Ինձ ոգևորում էր Նիցշեի բողոքող, ընդվզող ոգին,– ասում է բանաստեղծը:– Տիրող հասարակության կաշկանդումներից մարդուն ձերբազատելու ձգտումն էի տեսնում նրա մեջ: Բայց ավելի շատ ինձ գրավում էր Նիցշեի լակոնիկ, աֆորիստիկ, կուռ ոճը: Հետո տեսա, որ նրա փիլիսոփայությունը խորթ է իմ հոգուն: Նիցշեի ցանկացած աշխարհը հզորների աշխարհն է: Հերոսների պաշտամունք ես էլ ունեմ, բայց Նիցշեի գերմարդու դաժանությունը չեմ ընդունում: Նիցշեն իմ մեջ արմատ չձգեց. նա դաժա-

¹³ Մեկ տարի անց՝ 1911 թ., Ֆրանգյանը «Գեղարվեստ» ամսագրում տպագրում է «Ավ. Իսահակյան որպես մտածող. փիլիսոփայական վերլուծում» հոդվածը (հմ. 4, էջ 141-147), որին Մակինցյանն անդրադառնում է ուսումնասիրության վերջում ծանոթագրության տեսքով: Քննադատը ծիծաղելի և անլուրջ է համարում Ֆրանգյանի մեկնաբանությունը հատկապես Իսահակյան-Նիցշե աղերսների շուրջ:

¹⁴ «Սա դարասկզբի հայ գրականության ամենաբարդ հարցերից մեկի ճիշտ լուծման ուղին մատնանշող սկզբունքային խոր դիտողություն էր»,– գրում է Էդ. Ջրբաշյանը (Ջրբաշյան, 1979: 202):

¹⁵ Իսահակյան-Նիցշե աշխարհայացքային, փիլիսոփայական առնչությունների և սկզբունքային տարբերությունների մասին տե՛ս Էդ. Ջրբաշյան, Թումանյանի պոեմները, էջ 433-440:

նության փիլիսոփան է: Չէ՞ որ հայ ժողովուրդը դաժանության զոհն է...» (Ինճիկյան, 1977: 229):

Շարունակելով քննությունը՝ Մակինցյանը կտրուկ, բայց և նրբամտորեն ընդգծում է՝ բանաստեղծը, հիասթափված ամենքից ու ամեն ինչից, հեռանում է «ստեղծագործության կոյս ու զմրուխտյա անապատը» և որոնում իր իդեալը, իր «կենսասնապատակը»: Մարգարեացած բանաստեղծը հնչեցնում է «Տիեզերական զանգը»՝ ազդարարելով համաձավալ տիեզերքի և իր հոգու անքակտելի կապի ու առնչության մասին:

Ես իսկ զգում եմ, տեսնում եմ ահա –
Տիեզերքը ողջ – մի մեծ, անհուն զանգ,
Եվ հոգիս – նրա լեզվակը վսեմ...
Եվ ղողանջում է տիեզերքն ամեն –
Եվ իմ հոգումն է, իմ ոգին է այն,

Որ ղողանջում է – ես մարգարե եմ... (Իսահակյան, 1987: 62-63):

Բանաստեղծի այս բանաձևումը Մակինցյանը նոր միտք չի համարում¹⁶. մարգարե-բանաստեղծի կերպարը հատկապես XIX դարավերջին և XX դարի սկզբին տարածված է եղել հայ պոեզիայի մեջ: Կարևորն այստեղ մոտիվը ինքնատիպ ներկայացնելու մեջ է: Եվ Մակինցյանը, ի տարբերություն Ալ. Ռուբենու¹⁷, ընդգծում է նորը, որն Իսահակյանի հղացումն է. «...Նոր է տիեզերքի ու զանգի համեմատությունը, և այդ պատկերը ոչ Պուշկինից է փոխառված, ոչ էլ Լերմոնտովից» (352):

Բանաստեղծը՝ իբրև տիեզերական ոգու և ձայնի կրող, ստեղծագործությունը դարձնում է պաշտամունքի առարկա, կենսաարդարացում.

¹⁶ Հղում է անում գերմանացի ազգագրագետ, պատմաբան Հ. Շուրցին (նաև Հայնեին), թե «նախնական ցեղերի բանաստեղծները հասարակության մեջ արիամարիված լինելու պատճառով աշխատում են իրանց մոտեցնել, նմանեցնել ու նույնացնել մագերին, որպեսզի այդպիսով իրանց դիրքը բարձրացնեն» (352):

¹⁷ Ալ. Ռուբենին, համեմատելով Իսահակյանի «Տիեզերական զանգը» Պուշկինի և Լերմոնտովի «Մարգարե» բանաստեղծությունների հետ, գրում է. ««Տիեզերական զանգը» ժուս երգիչների ոտանավորների թույլ ու տարտամ վարիացիան է՝ նիջչեական զուևավորությամբ, սիմվոլիզմի պաճուճանքներով զարդարված» (Ռուբենի, 1904: 138):

Մեր խեղճ երգն է միակ ճարը

Անմխիթար սրտի համար.

Մեր խեղճ երգն է քո մեծ վերքի

Խոր մրմուռը, ունայն աշխարհ» (352):

Մարգարե բանաստեղծը տեսնում է հայկական իրականությունը՝ հեղձուկ ու աղարտված, ուր «լրբենի ծաղրով արհամարհվում են» ոգու թոփչքը, միտքն ու երազանքը: Մարդկային արատավոր հարաբերությունների, անարդարությունների հետ չհաշտվելով՝ նա հեռանում է աշխարհից՝ թողնելով հայրենիք, օրենք, իրավունք, ընկեր, կին.... Նրա խոհերի ու տրամադրությունների ամբողջական արտահայտությունն է դառնում «Աբու-Լալա Մահարին»:

«Աբու-Լալա Մահարի». բնութագրումների հակասականությունը

Մակինցյանը կարևորում է իրակությունը, որ Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմը, չնայած պատմական հերոսի ընտրությանը, բոլորովին էլ պատմական ստեղծագործություն չէ X-XI դդ. արաբ մեծ բանաստեղծի մասին (Աբու-լ-Ալա ալ-Մահարիի (973-1057))¹⁸, ուստի այն պատմագեղարվեստական ստեղծագործության չափանիշներով չի կարելի գնահատել¹⁹: Հաստատելու համար պնդումը բերում է մի շարք մանրամասներ արաբ բանաստեղծի կյանքից ու մատնանշում նրա աշխարհայեցության ու կենսափիլիսոփայության

¹⁸ Մակինցյանի այս տեսակետին անձանոթ ռուս հայտնի արաբագետ Ի. Յու. Կրաչկովսկին (1883-1951), կարդալով պոեմի ռուսերեն թարգմանությունը և չտեսնելով արաբ բանաստեղծի կյանքի ու խոհերի ճիշտ պատկերը, բացասական գնահատական է տալիս: Վ. Բրյուսովին գրած նամակում նա իր վրդովմունքն է հայտնում՝ պոեմը դասելով Մահարու նկատմամբ դրսևորած «եվրոպական ծաղրուծանակների» շարքը: Բրյուսովի պատասխան նամակից հետո է միայն Կրաչկովսկին փոխում վերաբերմունքը: Մանրամասները տե՛ս Էդ. Ջրբաշյան, Չորս գագաթ, էջ 157-159:

¹⁹ Քննադատը տողատակին նշում է, որ այդպիսի սխալ պատկերացում ունի, օրինակ՝ Վ. Փափագյանը: Ավելի ուշ՝ 1926 թ., Մակինցյանը «Խորհրդային Հայաստան» թերթի հմ. 234-ում տպագրած «Ուստա Կարոյի վերադարձը» հոդվածում գրում է. «Նրա «Աբու-Լալա Մահարին»-ն էլ ոչ թե արաբական հռչակավոր պոետն է, այլ ինքն՝ Ավետիք Իսահակյանը, իր մտավոր ու հոգեկան հորիզոններով, հարկավ պոեմը գրելու միջոցին»:

միջուկը կազմող մի քանի բանաձևումներ՝ «Բարի արա մարդկանց և մտքով, և գործով, նույնիսկ այն դեպքում, երբ նրանք քեզ նույնը չհատուցանեն», «Ուրիշին արա այն, ինչ որ կուզենայիր, որ նա քեզ անի, և ասա այն, ինչ որ կուզենայիր լսել նրանից», «Մենք խնդում ենք, բայց մեր խինդը – անմտություն է, որովհետև այս երկրի բնակիչները ավելի շուտ պիտի լային» (359):

Մակինցյանն այնուհետև թվարկում է հանգուցային տարբերություններն ու անհամապատասխանությունները պոեմի հերոսի և արաբ բանաստեղծի միջև (արաբ բանաստեղծը մանուկ հասակում զրկվել է աչքի լույսից, գրեթե ողջ կյանքը անց է կացրել Սիրիայի Մահարրա քաղաքում և երբեք չի հեռացել անապատ, Բաղդադ քաղաքում ապրել է ոչ թե «երեք տասնյակ տարի», այլ ընդամենը 18 ամիս, «հզորների և մեծատունների հետ սեղան չի նստել», «ուրիշ-ուրիշ ազգերի հայրենիքում չի եղել», երբեք չի ժխտել ո՛չ պետություն, ո՛չ օրենք, չի ատել մարդուն և այլն)՝ եզրակացնելով. «Այսպես ուրեմն, Ավ. Իսահակյանը իր պոեմը իր սեփական տրամադրությունից է հյուսել,- դա ավելի շուտ Շիրակի բանաստեղծի ապրումների պատմությունն է, քան թե պատմական «Բաղդադի» բանաստեղծի կյանքի վեպը»²⁰ (360):

Այսպիսով՝ պնդումը, թե Իսահակյանի պոեմը պատմական երկ համարելու որևէ հիմք չկա, միանգամայն ընդունելի է, սակայն խոտելի է քննադատի այն ծայրահեղ համոզումը, որ «պոեմի վերնագիրը Աբու Լալայի անվան տեղ կարող էր լինել և Աբու Ֆիրաս և Աբու Մոհամմեդ, և դրանից ոչինչ չէր փոխվի» (359): Այսպիսի մոտեցումն ակնհայտորեն սխալ է. Իսահակյանագիտությունը վաղուց հաստատել է՝ Իսահակյանն իր հերոսի ընտրությունը պատահական չի արել. իրենից 900 տարի առաջ ապրած բանաստեղծի տրամադրություններն ու

²⁰ 1917 թ. մարտի 18-ին Կ. Միքայելյանին ուղղված նամակում գրում է. «Գրում ես, թե «Մահարին» չի համապատասխանում պատմական դեպքին. դա, սիրելիս, ես լավ գիտեմ, ինձ միայն անուն էր պետք, հնությունը՝ կոյորիտը և մասամբ էլ նրա պեսիմիստ-փիլիսոփա հոգին: Նրա գրածները կարդացել եմ և գերմաներեն լեզվով և ֆրանսերեն. գիտեմ, որ նա կույր է եղել, Բաղդադ չի եղել, բայց այդ չէ կարևորը. այնտեղ ես եմ, ուրիշ ոչ ոք, միայն ուրիշի վերաբերման տակ» (Իսահակյան, 2020: 290):

կենսահայեցությունը անչափ հարազատ են եղել Իսահակյանի՝ հատկապես այդ ժամանակվա աշխարհազգացողությանը և հոռետեսական տրամադրություններին: «Երբ խոսքը նման մեծությունների մասին է, ինչպիսին են ալ-Մահարրին ու Իսահակյանը,– նկատում է գրականագետ Ավիկ Իսահակյանը,– պետք է հստակորեն գիտակցել, որ ոչ մի բան պատահական չի լինում» (Իսահակյան, 2007: 99): Իսկապես. 1926 թ. հունվարի 31-ին Հովհ. Ավագյանին ուղղված նամակում բանաստեղծը, անդրադառնալով Աբու-Լալա Մահարուն, գրում է. «...Իմ հոգու զավակն է նա, խորթ չէ ինձ այդ դժբախտ հոռետեսությունը: Արաբ նշանավոր բանաստեղծի գրությունների մի փոքր զիրք, գերմաներեն, ձեռս անցավ, կարդացի և գտա իմ հոգիս նրա հոգուն նման... և նրա ապրած միջավայրը համաձայն գտնելով իմ ռոմանտիկ խառնվածքին, – քարվան, անապատ, արևելք, խորհրդավորություն,– ընտրեցի նրան իմ հույզերս մարմնացնող: Արաբ բանաստեղծից միայն երկու տող եմ առել, և ուրիշ ո՛չ մի բառ, ո՛չ մի պատկեր, որ չլինի վերարտադրություն: Նույնիսկ նրա կյանքի հանգամանքները փոխել եմ. աղքատ է եղել նա, կույր, Բաղդադից դուրս չի եկել. միայն էությունն եմ [պահել] առել, իմ էությունը միևնույն ժամանակ» (Իսահակյան, 2021: 145):

Ըստ Մակինցյանի՝ պոեմի հոգեբանական-գաղափարական բովանդակությունը նոր պոռթկում չէ, այլ հանրագումարը բանաստեղծի փիլիսոփայական խոհերի, որոնք արտահայտվել են նախորդ երգերում: Սակայն այս դեպքում որակումներն ու գնահատականները խիստ կտրուկ են, աննահանջ, անխնա, առանց ներողամտության հնարավորության. անվերապահ սեր ու պաշտամունք կա միայն մոր նկատմամբ:

Մակինցյանը համոզված է, սակայն, որ հոռետեսական ու մերժողական այս տրամադրությունը ժամանակավոր բնույթ է կրում: Ավելին, «այդ բողոքականը», ըստ քննադատի, «մանրացնում է ինքն իրան իր մակերեսային մտածողությամբ և տեղ-տեղ արտահայտության վուլգար եղանակով» (361): Քննադատը, բերելով պոեմի հերոսի սուր-աֆորիստիկ լեզվով հնչեցրած մի քանի մտքեր, համարում է դրանք հին, մաշված, նույնիսկ «բանալ», և եզրակացնում, որ տար-

բեր ձևերով ներկայացվող միևնույն միտքը թուլացնում է տպավորությունը: Չհամաձայնելով Մակինցյանի կարծիքին՝ նկատենք, որ պոեմի կոնֆլիկտը երևան է գալիս հերոսի քնարական խորհրդածությունների շղթայում: Փիլիսոփայական մենախոսությամբ, գեղարվեստական պատկերների տրամաբանական ու հոգեբանական զարգացումով հյուսվում է պոեմի ներքին սյուժեն՝ բացահայտելով բանաստեղծ հերոսի թե՛ ներաշխարհը, թե՛ արտաքին աշխարհը, որը երկփեղկված է. մի կողմում բնությունն է՝ իր անգերազանցելի ու ներդաշնակ գեղեցկությամբ, մյուս կողմում՝ մարդկային հասարակությունն իր աղտեղված, չնչին ու մանր կորքերով, ստոր ու վաճառված հոգեբանությամբ: Որքան էլ Մակինցյանը նշում է, թե պոեմը՝ իբրև ամբողջություն, բովանդակության տեսանկյունից թույլ է, այնուամենայնիվ, հիացած ստեղծագործության գեղարվեստական պատկերային համակարգով, խոստովանում է. «... Բանաստեղծը խոսում է ոչ միայն մի նոր և արտասովոր նյութից, այլ, որ գլխավորն է, խոսում է մի յուրօրինակ ոճով, նյութին համապատասխան ցայտուն ու սահուն լեզվով: Ռուսահայ բանաստեղծների ամենալայն ընդհանրացումներն անգամ ազգի նեղ շրջանակից դուրս չեն եկել: Այս տեսակ ընդարձակ և համարձակ խոհերից, և նյութին այնքա՛ն ներդաշնակ ոճով դեռ չի խոսել մեր բանաստեղծներից և ոչ մեկը» (363):

Եզրակացությունը մեկն է. Ավ. Իսահակյանը «անպայման ինքնատիպ լիրիկ է և ռուսահայ գրականության մեջն - ունիկում», ավելին, Իսահակյանը «որոշ հոսանք է առաջացրել» (365)՝ իր ազդեցությունը տարածելով երիտասարդ շատ գրողների վրա: Իսկ ազդվե՞լ է Իսահակյանը որևէ մեկից: Մակինցյանը համոզված է՝ այդ մեկը Հայրնիխ Հայնեն է. երկուսի լիրիզմի մոտիվները նույնն են (հատկապես ուրու-սիրո և երազ-սիրո մոտիվները), երկուսն էլ մեծապես օգտվել են ժողովրդական երգերից, երկուսի ցավերն ու ապրումները բխում են նույն աղբյուրից: Այստեղից քննադատն անցնում է Իսահակյանի ոճին՝ համարելով այն ինքնուրույն ու արտահայտիչ, արևելյան ոճ: «Պարալելիզմի սկզբունքը Ավ. Իսահակյանի ամենազորեղ զենքն է. նրա զուգադրությունը միշտ դաշնակավոր է և կրկնությունը – մտածած: Պեյզաժը ույժ է տալիս զգացմունքի արտահայտության, և

կրկնությունը, կենտրոնացնելով ընթերցողի ուշադրությունը, խորացնում է տպավորությունը... Եվ Ա. Իսահակյանի հմայքը նրա քաղցրալուր աստնանսների (համահնչյունություն) և ալլիտերացիաների, ճկուն լեզվի թարմ դարձվածների, հյութալից պատկերների և նվագայնության մեջ է» (368): Քննադատն ընդգծում է՝ Իսահակյանի պատկերները «կենտրոնական տեղ են բռնում». բանաստեղծը ստիպում է ոչ միայն լսել նրա տողերի նվագը, այլև տեսնել այն: «Նրա միտքը թափառում է Օմարների, Խայամների «հեռու ավերում», անապատների, քարվանների հայրենիքում: Մեր բանաստեղծներից դեռ ո՛չ մեկը ոտք չի դրել այդ աշխարհը: Եվ Ավ. Իսահակյանն արդեն կատարյալ միջոցներ ունի մշակած, այնտեղ՝ նորանոր գեղագիտական արժեքներ արտադրելու համար (369):

Եզրակացություններ

1. «Դիմագծեր» հոդվածն առանձնանում է գրական-պատմական արժեքով՝ առաջին անգամ բացահայտելով Իսահակյանի ստեղծագործության հասարակական, գեղարվեստական բովանդակությունը, ոճն ու մեթոդը:

2. Լինելով մարքսիստական քննադատական դպրոցի ականառու ներկայացուցիչ՝ Մակինցյանն իր վերլուծությունն իրականացնում է սոցիոլոգիական մեթոդով՝ ուսումնասիրությունը կառուցելով միմյանց փոխկապակցած թեմաների՝ սեր - հայրենիք - երազանք - իրականություն - հասարակություն - անհատ - հոռետեսություն, տրամաբանական զարգացման շղթայով: Երբեմն Իսահակյանի երկերը քննվում են համաշխարհային գրականության համատեքստում:

3. Մակինցյանը Իսահակյանի ստեղծագործությունները մեկնաբանելիս հընթացս նկատում է դրանցում առկա ռոմանտիկական մեթոդի հայեցակետեր՝ առանձնացնելով նաև ռոմանտիզմի այնպիսի մոտիվներ, ինչպիսիք են երազի և իրականության հակադրությունը, մարգարե բանաստեղծի թեման:

4. Անդարադառնալով Իսահակյանի՝ Նիցշեից կրած ազդեցությանը հարցին՝ Մակինցյանը մի շարք փաստարկումներով ժխտում է դրա հնարավորությունը: Տրամաբանական հստակ ձևակերպումներով մերժում է նաև պոեմի պատմականությունը:

5. Մակինցյանի գնահատումներում երբեմն երևան են գալիս հակասություններ. մի կողմից՝ «Աբու-Լալա Մահարի» պոեմը՝ իբրև ամբողջություն, համարում է թույլ, մյուս կողմից՝ պոեմի նյութը անվանում է նոր ու արտասովոր, իսկ պատկերային համակարգը՝ հիանալի:

6. Թեև Մակինցյանի «Դիմագծեր» հոդվածն աչքի է ընկնում որոշակի հակասականությամբ, և ժամանակի հեռավորությունից ինչ-ինչ դրույթներ վիճարկելի և անընդունելի են, այնուամենայնիվ այն Իսահակյանի ստեղծագործական աշխարհի, ոճի, մեթոդի բացահայտման լուրջ փորձերից է, որ հետագայում դարձավ իսահակյանագիտության հիմնային ուսումնասիրություններից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աղբայան Ն.**, Երգ ու Վերք (Իսահակյան, Ավ.- Երգեր ու Վերքեր) // Մուրճ, 1898, թիվ 6, էջ 839-855:
2. **Ինճիկյան Ա.**, Ավետիք Իսահակյան, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1977, 257 էջ:
3. **Իսահակյան Ա.**, Ավետիք Իսահակյան. Հայդուկի երգեր, Երևան, «Արևիկ» հրատ., 1990, 320 էջ:
4. **Իսահակյան Ա.**, Ավետիք Իսահակյանի պոեմները, Երևան, «Վարպետ» հրատ., 2007, 242 էջ:
5. **Իսահակյան Ավ.**, Երկեր, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1987, 888 էջ:
6. **Իսահակյան Ավ.**, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 13, Երևան, «Էդիտ Պրինտ» հրատ., 2020, 720 էջ:
7. **Իսահակյան Ավ.**, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 14, Երևան, «Էդիտ Պրինտ» հրատ., 2021, 1136 էջ:
8. **Կարինյան Ա.**, Հայ նացիոնալիզմի ճգնաժամը // Պայքար, 1916, թիվ 36:
9. **Մակինցյան Պ.**, Դիմագծեր // Գարուն. գրական-քննադատական ալմանախ, հտ. 3, Մոսկվա, 1912, էջ 316-369:
10. **Մակինցյան Պ.**, Ուստա Կարոյի վերադարձը // Խորհրդային Հայաստան, 1926, թիվ 234:
11. **Ջրբաշյան Էդ.**, Թումանյանի պոեմները, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1986, 485 էջ:
12. **Ջրբաշյան Էդ.**, Չորս գագաթ, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1982, 468 էջ:

13. **Ջրբաշյան Էդ.**, Դարասկզբի հայ քննադատները // Հայ նոր գրականության պատմություն, հտ. 5, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1012 էջ:
14. **Ռուբենի Ալ.**, Ավետիք Իսահակյանի «Բանաստեղծությունները» 1903 թ., Բագու., // Մուրճ, 1904, թիվ 3, էջ 130-148:
15. **Սարինյան Ս.**, Հայ գաղափարաբանություն, Երևան, «Չանգակ-97», 1998, 318 էջ:
16. **Սարինյան Ս.**, Հայոց գրականության երկու դարը, Գիրք երկրորդ, Երևան, «Սովետական գրող», 1989, 568 էջ:
17. **Ֆրանգյան Ե.**, Ֆ. Նիցշե և նրա փիլիսոփայությունը, Թիֆլիս, Է-լեկտրաշարժ տպ. «Հերմես», 1910:

REFERENCES

1. **Aghbalyan N.**, Yerg u Verk (Isahakyan, Av.- Yerger u Verker) [Song and Wound (Isahakyan, Av.- Songs and Wounds)] // Murch, 1898, tiv 6, ej 839-855:
2. **Inchikyan A.**, Avetik Isahakyan [Avetik Isahakyan], Yerevan, «Sovetakan grogh» hrat., 1977, 257 ej:
3. **Isahakyan A.**, Avetik Isahakyan Hayduki yerger [Avetik Isahakyan. Hayduk's Songs], Yerevan, «Arevik» hrat., 1990, 320 ej:
4. **Isahakyan A.**, Avetik Isahakyan poyemnery [Avetik Isahakyan's poems], Yerevan, «Varpet» hrat., 2007, 242 ej:
5. **Isahakyan Av.**, Yerker [Works], Yerevan, «Sovetakan grogh» hrat., 1987, 888 ej:
6. **Isahakyan Av.**, Yerkeri liakatar zhoghovatsu [Full Collection of Works], ht. 13, Yerevan, «Edit Print» hrat., 2020, 720 ej:
7. **Isahakyan Av.**, Yerkeri liakatar zhoghovatsu [Full Collection of Works], ht. 14, Yerevan, «Edit Print» hrat., 2021, 1136 ej:
8. **Karinyan A.**, Hay natsionalizmi chgnazhamy [The Crisis of Armenian Nationalism] // Paykar, 1916, tiv 36:
9. **Makintsyan P.**, Dimagtser [Faces] // Garun. grakan-knnadatan almanakh, ht. 3, Moskva, 1912, ej 316-369:
10. **Makintsyan P.**, Usta Karoyi veradardzy [Return of Master Karo] // Khorhrdayin Hayastan, 1926, tiv 234:
11. **Jrbashyan Ed.**, Tumanyani poyemnery [Tumanyan's Poems], Yerevan, Yerevani hamalsarani hrat., 1986, 485 ej:
12. **Jrbashyan Ed.**, Chors gagat [Four Tops], Yerevan, «Sovetakan grogh» hrat., 1982, 468 ej:

13. **Jrbashyan Ed.**, *Daraskzbi hay k'nnadatnery* [Armenian critics of the turn of the century]// Hay nor grakanut'yan patmut'yun, ht. 5, Yerevan, HSSH GA hrat., 1012 ej:
14. **Rrubeni Al.**, Avetik Isahakyan «Banasteghtsutyunnery» 1903 t., Bagu. [Avetik Isahakyan's Poems» 1903, Bagu] // Murch, 1904, tiv 3, ej 130-148:
15. **Sarinyan S.**, Hay gaghaparabanutyun [Armenian Ideology], Yerevan, «Zangak-97», 1998, 318 ej:
16. **Sarinyan S.**, Hayots grakanutyan yerku dary [Two Centuries of Armenian Literature], Girk yerkrord, Yerevan, «Sovetakan grogh», 1989, 568 ej:
17. **Frangyan Ye.**, F. Nitshe yev nra pilisopayutyuny [Friedrich Nietzsche and His Philosophy], Tiflis, Elektrasharzh tp. «Hermes», 1910: